վառներում, ճիշտ է համեմատած շատ ավելի դանդաղ, շնորհիվ այն հանգամանքի, որ Զանգեզուրն երկար տասնամյակներ մեկուսացած մնաց ուրիշ անդրկովկասյան վայրերից, մանավանդ Կուր գետի անմիջական հարևանության շրջաններից, որոնք այդ պրոցեսին ենթարկվեցին շատ ավելի վաղ և ավելի խոր։ Զանգեզուրն էլ հետզհետե դառնում էր ռուսական գործարանների արտադրանքների սպառման շուկա, ինչպես մի այնպիսի անկյուն, որտեղից այդ գործարանները ստանում էին բուրդ, կաշի, կոկոն, վերջը նաև պղինձ։ Տարեցտարի աճող փոխանակության ներգործության տակ Զանգեզուրի գյուղերումն էլ կատարված էր նոր դասակարգային շերտավորում և գյուղական շենքերի մեջ XX դ. սկզբներին արդեն պարզ նկատվում էր հարուստ, միջին և աղքատ տնտեսությունների տարբերությունը։ Քաղաքի տների ճարտարապետական հատկանիշները— թիթեղե տանիքը, երկաթացանց պատշգամբները՝ հաճախակի կանաչով զարդարված, լայն պատուհանները, սենյակների մուտքի առջև նախասենյակն և այլ մանրամասնություններն, արդեն կրկնվում էին նաև գյուղական հարուստ, իսկ շատ ավելի մեղմացած չափերով և միջակների տներում։ Գյուղը իր ներքին պատկերը՝ ղարադամնէրի բլրաձև տանիքների կուտակումների միապաղաղ պատկերը, հետզհետե փոխում էր...։ Ցածրահասակ, մեծ մասամբ գետնի մեջ թաղված միօրինակ շենքերի միջից այս ու այն տեղ բարձրանում էին և աչքի էին զարնում երկհարկ, բազմաձև պատշգամբներով զարդարված, լայն բակերի պարիսպների մեջ առանձնացած կառուցումներ։

Վերջին հարյուրամյակում առաջ էր եկել գյուղերի բնույթը փոխող մի այլ ազդակ։ Գավառում հաստատվում էր ռուսական վարչական ձևը և դրա հետ միասին զինվորական և քաղաքացիական մարմիններում ծառայող թեև փոքրաթիվ, բայց ազդեցիկ պաշտոնեությունը, որն իր բնակարանային պահանջներով էր հանդես գալիս։ Մելիքական շրջանում, թե՛ 1826—1828 թթ. պարսկական պատերազմից առաջ և թե՛ հետո, կառավարությունը հարկադրված էր տեղում պահել զորամասեր։ Սենատոր Հանի օրենքի գործադրությունից անմիջապես հետո շատացավ ոստիկանական և դատական պաշտոնավարների թիվը, կանոնավորվում էր ֆինանսական ծառայությունը, կարգի էր բերվում փոստ-հեռագրատունը, գավառապետին կից գործող պետական ապարատն իր խիստ կենտրոնացմամբ բարդանում էր։ Գավառապետի նստավայրը՝ Գորիս գյուղն[4] իր սյունանման ժայռաբուրգերի մեջ սեղմված նեղ տարածությունով հարմարություն չէր ընձեռում այդ բազմազան պետական հիմնարկների համար, ինչպես և արագ բազմացող առևտրական պահեստների և խանութների համար։ Նեղվածք էր նաև այն արհեստանոցների համար, որոնք սպասարկում էին տեղական բնակիչների աճող պետքերը։ Կյանքը հրամայորեն թելադրում

[4] Գորիս գյուղը XIX դ. սկզբներին առաջավոր ռազմական էր պարսկական սահմանագծի մոտ։ «1826 թ. հուլիսին պարսիկների հանկարծակի ներխուժման ժամանակ Գորիսում գտնվում էին 42-րդ եգերական գնդի երեք վաշտերն երկու թնդանոթներով, Նագիմկա ենթագնդապետի հրամանատարության ներքո։ Իմանալով Աբաս-Միրզայի մի ուժեղ զորախմբի ներխուժման մասին՝ ռուսական զորաբաժինը սկսեց նահանջել դեպի Շուշի, բայց շուտով չորս կողմից շրջապատված էր թվով կրկնապատիկ գերազանցող թշնամուց։ Զինվորները հերոսաբար կռվում էին։ Սպանվածների թիվը մեծ էր։ Կենդանի մնացած սպաներն ու զինվորները գրեթե բոլորն էլ վիրավորված էին։ Զորաբաժինը հարկադրված էր անձնատուր լինել։ Գերիները տարվեցին Պարսկաստան, որտեղից ազատվեցին 1828 թ. Թուրքմենչայի դաշնագրության համաձայն»։ «Памятная книжка Елисаветпольской губ.» на 1914., էջ 376։